



30. ՇՐՆԵՐԿՐԻ ՀԵՔԻԱԹԸ

էրկու մարդ իրար հետ ճամփա են էթում: Գալիս են մի երկիր ու մեկի մոտ դնաղ ըլնում:

Քնելու վախտը էս տան տերը նրանց ասում ա.

— Դուք օջորքը բարձրացեք գշերը, շունքի մենք բոլորս էլ շուն ենք ըլնում ու ցերեկը էլի մարդ:

էս երկիրը Շընեբրկիրն էր: էս էրկու ճամբորդներից մինը շամատաց նրա ասածին՝ նրանց մոտ քնեց. իսկ մեկելը համատաց ու նի էլավ օջորքը ու էնտեղ դալիմացավ:

Գշերվա մի վախտ սաղ տանըցիք շուն էլան ու էն մարդին գողցցին. իսկ մեկելը մնաց սաղ, շունքի օջորքը չկարացին բանձրանալ:

էն ճամփորդը առավոտը վեր կացավ իրա ճամփեն բռնեց՝ դնաց: էկավ մի քաղաք, իրա հմար մի աղջիկ առավ ու նրա հետ պսակվեց: Մի օր տեհավ, որ մի մարդ մեռել ա, նրա կնկանն էլ հն հետը տանում թաղելու: Նա զարմացավ ու հարցրեց, թե ինչ թավուր սովորութի կա նրանց միջ: Նրան ասեցին, որ թե ինքը մեռնի՝ իրա կնկանն էլ նրա հետ կթաղեն, թե որ կնիկը մեռնի՝ իրան սաղ-սաղ կտանեն նրա հետ թաղելու:

Մի քանի ամսից ետ, էս մարդի կնիկը մեռավ: Իրան հետը

սաղ-սաղ տարան թաղելու: Նրա հմար մի ամսվա պաշար տվին, տարան մաղարա ու թաղեցին, մարդը նրա կողքին նստեց:

էն մարդը մնաց մենակ. մին էլ աչքերը բաց արեց ու տեհավ, որ շատ մեռելներ կան՝ որի մարդն ա մեռել, որի էլ կնիկը. որը մեռած, որը սաղ նստել են:

էն սաղերի մեջ մի սիրուն աղջիկ կար, որ իրա մեռած մարդու կողքին նստել էր: էս մարդը դնաց նրա հետ խոսեց ու մտածում էին, թե ո՞նց էստեղից դուռ էթան:

Աղջիկը ասեց.— Հիմա մի իշի նման ջանավար կգա, որ մեռելներ ուտի. երբ որ նա կուզենա դուռ դնա, մենք նրա ոտից կըրոնենք ու նա մեզ դուռ կտանի: էս մի քանի օր ա, որ ես էկա իմ մեռած մարդի հետ էստեղ:

Նրանք մի քիչ կացան, էն իշի նման ջանավարը էկավ. նրանք նրա պոչից բռնեցին, ու նա ջխտին քաջեց իրա հետ ընկավ ծովը ու ծովի միջից հանեց մի քաղաք, որտեղ իսկի մարդիկ չկային. ամեն բան հազիր դրած էր. դուքանները, տները բաց, համա մեջը մարդ չկար: էն մարդը էս բանի վրա շատ զարմացավ: Իրիկունը վրա հասավ, մթնեց. նրանք քնեցին. առավոտը էն մարդը վեր կացավ ու տեհավ, որ իրա կնիկը չկա: Մի մենձ փեչ վառեց ու տաքացրեց էնքան, որ լավ կարմրեց ու ինքը մոտը նստեց: Տեհավ մի փրշոտ ջանավար էկավ: Տղեն վրա հասավ ու նրա վրա ձեթ ածեց ու կրակ տվեց: Ջանավարը էրվեց թե չէ, տղեն վրա հասավ ու կտրտեց՝ քեց էն թեթ փեչը ու ինքը գնաց քաղաքը ման գալու: Նա նոր իմացավ, որ իրա կնկանը նա ա տարել:

էն մարդը գնաց տեհավ, որ իսկի մարդ չկա. դուքանները բաց են, մեջը լիքը ապրանք, համա ջին-ջանավար էլ ա չկա: Մի քիչ գնաց, տեհավ, որ մի փոսից ձեն ա գալի. մոտ կացավ, ասեց.

— Ո՞վ ես, ձեն տու, հողածի՞ն ես, ի՞նչ ես:

էն տնքողը ասեց.— Ծս մի պառավ եմ, էրկու իրեք տղա ունեի. մի փրշոտ ջանավար էկավ փռթեց նրանց ու կերավ. ես էլ էկա մտա հիմիկուց հողի տակ, որ նա ինձ էլ շուտի ու հողին արժանի ըլնեմ: էս քառասուն օր ա, որ էստեղ եմ. էն ջանավարը սաղ քաղաքի մարդկերանցը կերել ա:

Նա ասեց, որ ինքը էն ջանավարին սպանել ա: Պառավը ուրախացած դուռ էկավ ու նրան տարավ իրանց տները շանց տվեց:

էն մարդը էն ծեր մարդին ասեց.— Սրանից դեն, ես քեզ որդի,

դու ինձ հեր, տար ինձ պսակի ուրիշ երկրում ու գանք էս քաղաքը
էլի մարդկերանցով լցնենք:

էն ծեր մարգր ասեց.— էս ծովով շի ըլնի անց կենալ. մի իշի
նման ջանավար կգա, գու նրա պոչից կախ իլ, գնա էն երկիրը,
որ կնկանը ու մարդուն իրար հետ են թաղում, թեկուզ նրանցից
մինը սաղ ըլնի, մտի էն մաղարեն ու մի աղջիկ բեր քեզ հմար ու
էստեղ ապրենք:

Նա ասեց ծեր բարուն, որ ինքն էլ էն իշի նման ջանավարի
ձեռով ա էկել էստեղ:

Մի քիչ կացան էն ջանավարը էկավ ու երբ որ իմացավ, որ էն
փրշոտ ջանավարին սպանել են, շատ ուրախացավ: էն տղեն նրա
պոչից բռնեց ու գնաց էն մաղարից մի աղջիկ բերեց. իրան կնիկ
ջինեց:

Մի քանի վախտից հետո նա էրեխա ունեցավ ու քանի գնաց,
դհա էվելցավ. իրար վրա պսակվելով ջատացան ու լցվեցին սաղ
քաղաքը:

Նա մարդիկ հավաքեց ու գնաց կովի էն երկրի մարդկերանց
վրա, որ մարդ ու կնկա իրար հետ են թաղում: Նրանց ջարդեց ու
ետ էկավ իրա քաղաքը:

էն վախտը էն փրշոտ ջանավարի մերը էկավ իրա որդուն տե-
նալու. տեհավ սպանել են, գնաց մարդիկ հավաքեց ու կովեց նրա
հետ: Քիչ էր մնացել էն տղեն ջարդվում էր իրա մարդկերանցով,
համա էն էշի նման ջանավարը իրա ընկերներով էկավ նրա դհից
կովեց ու ջարդեց էն ջանավարի մորը ու իրա մարդկերանց: Նա
չունքի շատ էր պառավել, մեռավ ու իրա մեռնելուց առաջ ասեց,
որ իրա որդիքը իրանից հետո էթան Շըներկրի վրա կռիվ ու ջար-
դեն էնտեղի մարդկերանցը: Նրա մեռնելուց հետո նրա որդիքը գնա-
ցին Շըներկրի վրա կռիվ. ջարդեցին ու հիմնահատակ արին նրանք
երկիրը:

էս քաղաքը նրանից դեն քանի գնաց դհա մենձացավ ու ջա-
տացան նրա միշի մարդիկը. էլ առաջվա նման անմարդ չէր:

